ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբեր, 2026



Բովանդակություն

Բովանդակություն 1

Ֆինանսական դիրք 2

Վարկային պորտֆել և համեմատականներ 3

Տրամադրված վարկերի ծավալը 3

Տրամադրված վարկերի քանակը 3

Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ 5


Վարկերի կառավարում 6

Վերլուծական գործակիցներ 7

Ֆինանսական դիրք

- **Ակտիվներ:** ՀՀ ՎԿԱ անդամների համախառն ակտիվները 2026թ.-ի Սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել են 287.55 մլրդ դրամ՝ 2025թ.-ի Սեպտեմբերի նկատմամբ աճելով 15.7%-ով, իսկ 2026թ.-ի Օգոստոսի նկատմամբ՝ 1.8%-ով: (Գծ.1):
- **Վարկային Պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը 2026թ.-ի Սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 231.30 մլրդ դրամ՝ նախորդ տարվա Սեպտեմբերի նկատմամբ աճելով 19.6%-ով, իսկ 2026թ. Օգոստոսի նկատմամբ՝0.6% (Գծ.1):
- **Կապիտալ:** ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալը 2026թ.-ի Սեպտեմբերի վերջի դրությամբ կազմել է 96.78 մլրդ դրամ՝ 2025թ.-ի Սեպտեմբերի նկատմամբ աճելով 11.5%-ով, իսկ 2026թ.-ի Օգոստոսի նկատմամբ՝ 0.1%-ով (Գծ.1):

Գծապատկեր 1. ՀՀ ՎԿԱ անդամների ֆինանսական դիրքը 2025-2026թթ. Սեպտեմբերի վերջի դրությամբ




Վարկային պորտֆել և համեմատականներ

Տրամադրված վարկերի ծավալը

- 2026թ.-ի Սեպտեմբեր ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 18.86 մլրդ դրամի վարկ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 15.6%-ով, իսկ 2026թ.-ի Օգոստոսի նկատմամբ նվազել է 8.2%-ով (Գծ. 2):

Գծապատկեր 2. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2025 և 2026 թթ.-րի Հունվար-Սեպտեմբեր ամիսներին տրամադրված վարկերի ծավալը




Տրամադրված վարկերի քանակը


- 2026թ.-ի Սեպտեմբեր ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 69,460 վարկ, որը նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 0.7%-ով, իսկ 2025թ.-ի Սեպտեմբերի նկատմամբ աճել է 24.6%-ով (Գծ. 3):

- 2026թ.-ի Սեպտեմբեր ամսվա վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամներն ունեցել են 280,497 ակտիվ վարկառուներ: Ակտիվ վարկառուների քանակը 2025թ.-ի Սեպտեմբերի նկատմամբ աճել է 26.2%-ով, իսկ 2026թ.-ի Օգոստոսի նկատմամբ՝ 2.0%-ով:
- ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2026թ.-ի Սեպտեմբերին տրամադրված վարկերի միջին մեծությունը կազմել է 272 հազար դրամ, իսկ վարկային պորտֆելի միջին վարկի մեծությունը կազմել է 825 հազար դրամ: Նույն ցուցանիշները 2025թ.-ի Սեպտեմբերին կազմել են համապատասխանաբար՝ 293 և 870-հազարական դրամ (Գծ. 4):

Գծապատկեր 3. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2025 և 2026 թթ.- րի Հունվար-Սեպտեմբեր ամիսներին տրամադրված վարկերի քանակը




Գծապատկեր 4. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի միջին մեծություն



Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ

- 2026թ.-ի Սեպտեմբերի դրությամբ Ասոցիացիայի անդամները միասին վերցրած ՀՀ ամբողջ տարածքում ունեցել են 170 մասնաճյուղ, որը, համեմատած 2025թ.-ի Սեպտեմբերի հետ, աճել է 13-ով:
- ՀՀ ՎԿԱ անդամները 2026թ.-ի Սեպտեմբերի դրությամբ ունեցել են 475 վարկային մասնագետ, որը, համեմատած 2025թ.-ի Սեպտեմբերի հետ, աճել է 41-ով:
- 2026թ.-ի Սեպտեմբերին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի գծով մեկ վարկային մասնագետի հաշվով միջին վարկի մեծությունը կազմել է 39.70 մլն դրամ, նախորդ ամսին՝ 36.94 մլն դրամ, իսկ 2025թ.-ի Սեպտեմբերին այս ցուցանիշը կազմել է ևս 37.59 մլն դրամ (Գծ. 5):
- 2026թ.-ի Սեպտեմբերի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով կազմել է 486.93 մլն դրամ, նախորդ ամսվա 487.02 մլն դրամի և 2025թ.-ի Սեպտեմբերին 445.63 մլն դրամի համեմատ (Գծ. 5):

Գծապատկեր 5. ՀՀ ՎԿԱ անդամների տրամադրված միջին վարկը և վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով




Վարկերի կառավարում

- **Մինչև 30 օր ժամկետանց պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը 2026թ.-ի Սեպտեմբերի վերջի դրությամբ կազմել է 3,457 մլն դրամ, նախորդ ամիս՝ 3,192 մլն դրամ և 2025թ.-ի Սեպտեմբերին՝ 2,197 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը աճել է 57.3%-ով, իսկ 2026թ.-ի Օգոստոսի նկատմամբ աճել է 8.3%-ով: 2026թ.-ի Սեպտեմբերի վերջի դրությամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 1.49%-ը, 2025թ.-ի Սեպտեմբերին ևս կազմել է 1.14% (Գծ. 6):
- **Ժամկետանց պորտֆել 30 օրից ավել:** ՀՀ ՎԿԱ անդամների 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը 2026թ.-ի Սեպտեմբերի վերջի դրությամբ կազմել է 6,391 մլն դրամ, նախորդ ամիս՝ 5,875 մլն դրամ և 2025 թ.-ի Սեպտեմբերին՝4,077 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը աճել է 56.8%-ով, իսկ 2026թ.-ի Օգոստոսի նկատմամբ՝ 8.8%-ով: 2026թ.-ի

Սեպտեմբերի վերջի դրությամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 2.76%-ը, 2025թ.-ի Սեպտեմբերին՝ 2.11% (Գծ. 6):

- **Զուտ դուրսգրումներ:** 2026թ.-ի Սեպտեմբերի վերջի դրությամբ Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է 2,198 մլն դրամ, նախորդ ամիս՝ 1,995 մլն դրամ և 2025թ.-ի Սեպտեմբերին՝ 986 մլն դրամ: Զուտ դուրս գրված վարկերի ծավալը 2026թ.-ի Սեպտեմբերին նախորդ ամսվա նկատմամբ աճել է 10.1%-ով, իսկ 2025թ.-ի Սեպտեմբերի նկատմամբ աճել է 122.8%-ով: Ասոցիացիայի անդամների սույն թվականի Սեպտեմբերի զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է համախառն վարկային պորտֆելի 0.95%-ը, նախորդ ամիս՝ 0. 87% և 2025թ.-ի Սեպտեմբերին 0.51% (Գծ. 6):

Գծապատկեր 6. ՀՀ ՎԿԱ անդամների վարկերի ծավալները Սեպտեմբերի 30-ի դրությամբ





Վերլուծական գործակիցներ


- 2026թ.-ի Սեպտեմբերի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համախառն վարկային պորտֆելի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 80.4%, որը վկայում է այն մասին, որ ակտիվների ծանրակշիռ մեծամասնությունը ուղղվում է վարկավորմանը: Նույն ցուցանիշը 2025թ.-ի Սեպտեմբերին կազմել է 77.8% (Գծ. 7):

- Սույն թվականի Սեպտեմբերի դրությամբ Ասոցիացիայի անդամների ընդհանուր կապիտալի և վարկային պորտֆելի հարաբերակցությունը կազմել է 41.8%: Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ Ասոցիացիայի անդամների վարկավորման ծավալի 42%-ը իրականացվում է սեփական կապիտալի հաշվին: Նույն ցուցանիշը 2025թ.-ի Սեպտեմբերին կազմել է 44.9% (Գծ. 7):
- 2026թ.-ի Սեպտեմբերի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 33.7%, որը վկայում է Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների բարձր կապիտալիզացիայի մասին: Նույն ցուցանիշը 2025թ.-ի Սեպտեմբերին կազմել է 34.9% (Գծ. 7):
- Ընդհանուր պարտավորությունների և կապիտալի հարաբերակցության ցուցանիշը ցույց է տալիս միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունների չափը: Այս ցուցանիշը ցույց է տալիս նաև վարկային բիզնեսի կառավարման արդյունավետության մակարդակը: 2026թ.-ի Սեպտեմբեր ամսվա դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համար այս գործակիցը կազմել է 1.97, այսինքն միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունները 2.0 անգամ գերազանցել է կապիտալի մակարդակը: Նույն ցուցանիշը նախորդ տարվա Սեպտեմբերի համար կազմել է 1.86:

Գծապատկեր 7. ՀՀ ՎԿԱ անդամների վերլուծական գործակիցներ




Տրամադրված վարկերի ընդհանուր ծավալն ու քանակությունը
55.741
60.283
61.106
67.326
67.074
123.104
78.021
77.752
85.415
79.912
78.382
69.977
69.460
Sep-25
Oct-25
Nov-25
Dec-25
Jan-26
Feb-26
Mar-26
Apr-26
May-26
Jun-26
Jul-26
Aug-26
Sep-26


Ժամկետանց վարկերի դինամիկան 09/2025-09/2026
PAR 1-30 days
PAR more than 30 days
7.000.000
6.000.000
5.000.000
4.000.000
3.000.000
2.000.000
1.000.000
-
Sep-25
Oct-25
Nov-25
Dec-25
Jan-26
Feb-26
Mar-26
Apr-26
May-26
Jun-26
Jul-26
Aug-26
Sep-26